

*ԵԱՀԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ  
ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ*

**Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին Եվրոպայի  
խորհրդի կոնվենցիա**

**ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ**

- Նախաբան.....
- Գլուխ I Նպատակները, գործողության ոլորտը, խտրականության բացառման  
սկզբունքը և սահմանումները.....
- Գլուխ II Կանխարգելում, համագործակցություն և այլ միջոցներ.....
- Գլուխ III Միջոցներ՝ ուղղված գոհերի իրավունքների պաշտպանությանը և  
ԷՅՅՍՅԱ՝ երաշխավորելով գենդերային հավասարությունը  
.....
- Գլուխ IV Քրեական իրավունք.....
- Գլուխ V Քննություն, քրեական հետապնդում և դատավարական  
իրավունք.....
- Գլուխ VI Միջազգային համագործակցություն և համագործակցություն  
քաղաքացիական հասարակության հետ.....
- Գլուխ VII Մոնիտորինգի մեխանիզմ.....
- Գլուխ VIII Կապը այլ միջազգային փաստաթղթերի հետ.....
- Գլուխ IX Փոփոխություններ Կոնվենցիայի տեքստում.....
- Գլուխ X Եզրափակիչ դրույթներ.....

*(Ընդունվել է Նախարարների Կոմիտեի կողմից 2005 թ. մայիսի 3-ին Փոխնախարարների 925-րդ նիստում)*

## **Նախաբան**

*Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունները և սույն Կոնվենցիայի մյուս Ստորագրյալ պետությունները,*

*հաշվի առնելով,* որ Եվրոպայի Խորհրդի նպատակը նրա անդամների միջև առավել սերտ միասնության ձեռքբերումն է,

*նկատի ունենալով,* որ մարդկանց թրաֆիքինգը հանդիսանում է մարդու իրավունքների խախտում և ոտնձգություն անձի արժանապատվության ու անձեռնմխելիության դեմ,

*հաշվի առնելով,* որ մարդկանց թրաֆիքինգը կարող է հանգեցնել զոհերի ստրկության,

*գիտակցելով,* որ զոհերի իրավունքների հարգումը, նրանց պաշտպանությունը և մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը պետք է լինեն առաջնակարգ նպատակներ,

*հաշվի առնելով,* որ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի բոլոր միջոցներն ու նախաձեռնությունները պետք է կրեն ոչ խտրական բնույթ, բխեն գենդերային հավասարությունից, ինչպես նաև կողմնորոշված լինեն դեպի երեխաների իրավունքների պաշտպանությունը,

*հիշատակելով* Նախարարների Կոմիտեի 112-րդ (2003 թ. մայիսի 14-15) և 114-րդ (2004 թ. մայիսի 12-13) նստաշրջաններում անդամ պետությունների արտաքին գործերի նախարարների՝ Եվրոպայի Խորհրդի կողմից մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ուժեղացման վերաբերյալ հայտարարությունները,

*նկատի ունենալով* Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան (1950 թ.) և դրան կից արձանագրությունները,

*նկատի ունենալով* Նախարարների Կոմիտեի կողմից Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններին տրված հետևյալ ռեկոմենդացիաները. Ռեկոմենդացիա No. R (91) 11 երեխաների ու երիտասարդ չափահասների սեռական շահագործման, պոռնկագրության ու մարմնավաճառության և թրաֆիքինգի մասին; Ռեկոմենդացիա No. R (97) 13 վկաների ահաբեկման և պաշտպանության կողմի իրավունքների մասին; Ռեկոմենդացիա No. R (2000) 11 սեռական շահագործման նպատակով մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին և Ռեկոմենդացիա Rec (2001) 16 սեռական շահագործումից երեխաների պաշտպանության մասին; Ռեկոմենդացիա Rec (2002) 5 բռնությունից կանանց պաշտպանության մասին,

*նկատի ունենալով* Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Ասամբլեայի հետևյալ ռեկոմենդացիաները. Ռեկոմենդացիա 1325 (1997) Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններում կանանց թրաֆիքինգի և հարկադրաբար մարմնավաճառությամբ

զբաղվելու մասին; Ռեկոմենդացիա 1450 (2000) Եվրոպայում կանանց դեմ բռնության մասին; Ռեկոմենդացիա 1545 (2002) կանանց թրաֆիքինգի դեմ պայքարի արշավ կազմակերպելու մասին; Ռեկոմենդացիա 1610 (2003) կանանց թրաֆիքինգի և մարմնավաճառության հետ կապված միգրացիայի մասին; Ռեկոմենդացիա 1611 (2003) Եվրոպայում մարդու օրգանների առևտրի մասին; Ռեկոմենդացիա 1663 (2004) Տնային ստրկություն, ստրկական, կախյալ վիճակ, դայակներ և փոստով պատվիրված հարսնացուներ,

*նկատի ունենալով* Եվրամիության Խորհրդի 2002 թ. հուլիսի 19-ի մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին շրջանակային որոշումը, Եվրամիության Խորհրդի 2001 թ. մարտի 15-ի քրեական դատավարությունում տուժողների կարգավիճակի մասին շրջանակային որոշումը և Եվրամիության Խորհրդի 2004 թ. ապրիլի 29-ի դիրեկտիվը կացության թույլտվություն տալու երրորդ պետության այն քաղաքացիներին, ովքեր հանդիսանում են թրաֆիքինգից զոհեր կամ, ովքեր ենթարկվել են ապօրինի ներգաղթին նպաստող գործողությունների և համագործակցում են իրավասու մարմինների հետ,

*կարևորելով* Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Միավորված Ազգերի Կազմակերպության Կոնվենցիան և դրան կից՝ Մարդկանց, հատկապես կանանց ու երեխաների թրաֆիքինգի կանխարգելման, կանխման և դրա համար պատժի մասին Արձանագրությունը՝ այդ փաստաթղթերով նախատեսված պաշտպանության մեխանիզմը բարելավելու և դրանցում ամրագրված չափանիշները զարգացնելու նպատակով,

*կարևորելով* նաև մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի բնագավառի այլ համապատասխան միջազգային իրավական փաստաթղթերը,

*հաշվի առնելով* թրաֆիքինգից տուժած անձանց իրավունքներն ամրագրող և մոնիտորինգի հատուկ մեխանիզմ սահմանող համապարփակ միջազգային իրավական փաստաթուղթ մշակելու անհրաժեշտությունը,

*համաձայնության են եկել հետևյալի շուրջ.*

## **Գլուխ I Նպատակները, գործողության ոլորտը, խտրականության բացառման սկզբունքը և սահմանումները**

### *Հոդված 1*

#### *Կոնվենցիայի նպատակները*

1. Սույն Կոնվենցիայի նպատակներն են.

ա) կանխարգելել ու պայքարել մարդկանց թրաֆիքինգի դեմ՝ երաշխավորելով զենդեբային հավասարությունը,

բ) պաշտպանել թրաֆիքինգից զոհերի մարդու իրավունքները, մշակել զոհերի ու վկաների պաշտպանության և օգնության համապարփակ մեխանիզմ՝ երաշխավորելով

զենդերային հավասարությունը, ինչպես նաև ապահովել արդյունավետ քննություն և քրեական հետապնդում,

զ) նպաստել մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի բնագավառում միջազգային համագործակցության զարգացմանը:

2. Կոնվենցիայի դրույթների արդյունավետ իրականացման ապահովման նպատակով, սույն կոնվենցիան նախատեսում է ստեղծել մոնիտորինգի հատուկ մեխանիզմ:

#### *Հոդված 2*

##### *Գործողության ոլորտը*

Սույն Կոնվենցիան կիրառվում է մարդկանց թրաֆիքինգի բոլոր ձևերի նկատմամբ, անկախ դրանց ազգային կամ անդրազգային բնույթից, անկախ կազմակերպված հանցավորության հետ ունեցած կամ չունեցած կապից:

#### *Հոդված 3*

##### *Խտրականության բացառման սկզբունք*

Սույն Կոնվենցիայի դրույթները, մասնավորապես այն դրույթները, որոնք վերաբերում են զոհերի իրավունքների պաշտպանությանն ու ապահովմանը, պետք է իրականացվեն առանց որևէ խտրականության՝ կապված սեռի, ռասայի, մաշկի գույնի, լեզվի, դավանանքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային կամ սոցիալական ծագման, ազգային փոքրամասնությանը պատկանելության, ծննդի, գույքային կամ այլ դրության հետ:

#### *Հոդված 4*

##### *Սահմանումներ*

Սույն Կոնվենցիայի նպատակների համար.

ա) «մարդկանց թրաֆիքինգ» է շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ընդունելը՝ ուժի սպառնալիք կամ ուժ գործադրելու կամ հարկադրանքի որևէ այլ ձև կիրառելու, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու, կամ այլ անձնավորության նկատմամբ որոշակի վերահսկողություն իրականացնող որևէ անձի համաձայնությունը ձեռք բերելու նպատակով դրամական միջոցներ կամ այլ օգուտներ տրամադրելու կամ ստանալու եղանակով: Շահագործումը ներառում է այլ անձանց մարմնավաճառության կամ սեքսուալ այլ շահագործումը, հարկադիր աշխատանքները կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը հավասարազոր վիճակը, տաժանակիր աշխատանքները կամ օրգանների հեռացումը.

բ) սույն հոդվածի «ա» կետում նշված շահագործման այս կամ այն ձևի կիրառման վերաբերյալ թրաֆիքինգից տուժած անձի համաձայնությունը որևէ նշանակություն չունի այն դեպքում, երբ կիրառվել է այդ կետում նախատեսված եղանակներից որևէ մեկը.

գ) շահագործման նպատակով երեխային հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ընդունելը համարվում է «մարդկանց թրաֆիքինգ» նույնիսկ այն դեպքում, երբ դա կապված չէ սույն հոդվածի «ա» կետում նախատեսված եղանակներից որևէ մեկի կիրառման հետ.

դ) «երեխա» է համարվում տասնութ տարին չլրացած ցանկացած անձ.

ե) «տուժած» է համարվում սույն հոդվածում սահմանված ձևով թրաֆիքինգի մեջ ներքաշված ցանկացած ֆիզիկական անձ:

## **Գլուխ II Կանխարգելում, համագործակցություն և այլ միջոցներ**

### *Հոդված 5*

#### *Մարդկանց թրաֆիքինգի կանխարգելումը*

1. Յուրաքանչյուր կողմ պետք է միջոցներ ձեռնարկի մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման ու դրա դեմ պայքարի համար պատասխանատու տարբեր մարմինների միջև պետական մակարդակով համագործակցություն հաստատելու և ամրապնդելու ուղղությամբ:

2. Յուրաքանչյուր կողմ պետք է մշակի և/կամ զարգացնի մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման ուղղված արդյունավետ քաղաքականություն և համապատասխան ծրագրեր՝ կիրառելով այնպիսի միջոցներ, ինչպիսիք են հետազոտությունները, տեղեկատվությունը, իրազեկության մակարդակի բարձրացումը, կրթական միջոցառումները, սոցիալ-տնտեսական նախաձեռնությունները և վերապատրաստման ծրագրերը, մասնավորապես թրաֆիքինգի մեջ ներքաշվելու տեսակետից անձանց առավել խոցելի կատեգորիաների և մարդկանց թրաֆիքինգի խնդիրներով զբաղվող մասնագետների համար:

3. Յուրաքանչյուր կողմ մասում նշված քաղաքականությունը և ծրագրերը մշակելիս, իրագործելիս և գնահատելիս պետք է հանդես գա մարդու իրավունքների ապահովման, գենդերային խնդիրների առաջնայնության և երեխաների շահերի պաշտպանության դիրքերից:

4. Անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի համապատասխան միջոցներ միգրացիայի օրինականությունն ապահովելու ուղղությամբ՝ օրինական ճանապարհով իր տարածք մուտք գործելու և այդտեղ գտնվելու պայմանների մասին

անհրաժեշտ տեղեկատվություն տարածելու եղանակով, մասնավորապես համապատասխան մարմինների միջոցով:

5. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի հատուկ միջոցներ երեխաների շրջանում թրաֆիքինգը նվազեցնելու ուղղությամբ, հատկապես նրանց համար պաշտպանությունն ապահովող միջավայր ստեղծելու միջոցով:

6. Սույն հոդվածին համապատասխան ձեռնարկված միջոցառումներին անհրաժեշտության դեպքում պետք է ներգրավվեն հասարակական կազմակերպությունները, ուրիշ կազմակերպություններ և քաղաքացիական հասարակության այլ տարրեր, որոնց գործունեությունն նպատակաուղղված է մարդկանց թրաֆիքինգի կանխարգելմանը և թրաֆիքինգից տուժած անձանց պաշտպանությանն ու օժանդակությանը:

#### *Հոդված 6*

##### *Թրաֆիքինգի պահանջարկի նվազեցմանն ուղղված միջոցներ*

Մարդկանց, մասնավորապես կանանց և երեխաների շահագործման բոլոր ձևերին նպաստող պայմանների նվազեցման համար, որոնք հանգեցնում են թրաֆիքինգի, յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի կամ զարգացնի օրենսդրական, վարչական, կրթական, սոցիալական, մշակութային և այլ միջոցներ, որոնք ներառում են.

ա) հետազոտություններ լավագույն փորձի, մեթոդների ու ռազմավարությունների բնագավառում,

բ) մարդկանց թրաֆիքինգի պահանջարկի, որպես թրաֆիքինգի արմատական պատճառներից մեկի, բացահայտման հարցում զանգվածային լրատվության միջոցների ու քաղաքացիական հասարակության պատասխանատվության և կարևոր դերի վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացում,

գ) նպատակային տեղեկատվական արշավների կազմակերպում՝ անհրաժեշտության դեպքում, ներառյալ նաև՝ պետական մարմինների և քաղաքականություն մշակողների մասնակցությամբ,

դ) կանխարգելիչ միջոցներ, ներառյալ կրթական ծրագրեր դպրոցական տարիքի տղաների ու աղջիկների համար, որոնք ընդգծում են սեռի հիմքով խտրականության անթույլատրելիությունը և դրա կործանարար հետևանքները, գենդերային հավասարության և յուրաքանչյուր մարդու արժանապատվության ու ամբողջական կերպարի կարևորությունը:

#### *Հոդված 7*

##### *Սահմանային միջոցառումներ*

1. Չխախտելով ազատ տեղաշարժման իրավունքի ապահովման հարցում ստանձնած միջազգային պարտավորությունները՝ կողմերը պետք է հնարավորինս ուժեղացնեն սահմանային վերահսկողությունը՝ մարդկանց թրաֆիքինգի բացահայտման ու կանխարգելման համար:
2. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի օրենսդրական կամ այլ անհրաժեշտ միջոցներ սույն կոնվենցիայում նախատեսված հանցավոր արարքների կատարման ժամանակ առևտրային փոխադրումներ իրականացնող ընկերությունների տրանսպորտային միջոցների օգտագործումը կանխելու ուղղությամբ:
3. Չխախտելով համապատասխան միջազգային կոնվենցիաները՝ այդ միջոցների կիրառումը ընդգրկում է առևտրային փոխադրումներ իրականացնող ընկերությունների, այդ թվում՝ ցանկացած տրանսպորտային ընկերության կամ ցանկացած տրանսպորտային միջոց շահագործողի կամ դրա սեփականատիրոջ կողմից բոլոր ուղևորների մոտ ընդունող պետություն մուտք գործելու համար պահանջվող բոլոր ճամփորդական փաստաթղթերի առկայության հավաստման պարտականության ստանձնում:
4. Յուրաքանչյուր կողմ իր ներքին օրենսդրությանը համապատասխան պետք է ձեռնարկի անհրաժեշտ միջոցներ սույն հոդվածի 3-րդ մասում ամրագրված պարտականության խախտման դեպքում համապատասխան սանկցիաների կիրառման ապահովման ուղղությամբ:
5. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են իր ներքին օրենսդրությանը համապատասխան սույն կոնվենցիայում նախատեսված հանցավոր արարքների կատարման մեջ մասնակցած անձանց մուտքն արգելելու կամ մուտքի արտոնագրերը չեղյալ հայտարարելու համար:
6. Կողմերը պետք է ամրապնդեն համագործակցությունը սահմանային վերահսկողության մարմինների միջև, այդ թվում նաև՝ նրանց միջև ուղիղ կապ հաստատելու և պահպանելու միջոցով:

#### *Հոդված 8*

##### *Փաստաթղթերի անվտանգությունն ու հսկումը*

Յուրաքանչյուր կողմ, անհրաժեշտության դեպքում, պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք պետք է ապահովեն.

ա) նրա կողմից տրված ճամփորդական կամ անձը հաստատող փաստաթղթերի այնպիսի որակը, որը թույլ չի տա դրանք ապօրինի օգտագործել և հեշտությամբ կեղծել կամ ապօրինի փոփոխել, կրկնօրինակել կամ տրամադրել, և

բ) նրա կողմից կամ նրա անունից տրված ճամփորդական կամ անձը հաստատող փաստաթղթերի ամբողջականությունն ու անվտանգությունը և կանխեն դրանց ապօրինի պատրաստումը և տրամադրումը:

#### *Հոդված 9*

##### *Փաստաթղթերի օրինականությունը և վավերությունը*

Կողմերից որևէ մեկը մյուս կողմի պահանջով իր ներքին օրենսդրությանը համապատասխան պետք է որոշակի ողջամիտ ժամկետի ընթացքում հավաստի այն ճամփորդական կամ անձը հաստատող փաստաթղթերի օրինականությունը և վավերությունը, որոնք տրվել կամ իբրև թե տրվել են իր անունից, և ենթադրաբար օգտագործվել են մարդկանց թրաֆիքինգի նպատակով:

### **Գլուխ III Միջոցներ՝ ուղղված զոհերի իրավունքների պաշտպանությանը և ապահովմանը՝ երաշխավորելով գենդերային հավասարությունը**

#### *Հոդված 10*

##### *Տուժածների բացահայտումը*

1. Յուրաքանչյուր կողմի իրավասու մարմինները պետք է համալրված լինեն մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման ու դրա դեմ պայքարի, ինչպես նաև զոհերի, ներառյալ երեխաների, բացահայտման ու նրանց օգնություն ցուցաբերելու բնագավառի վերապատրաստված և որակյալ մասնագետներով և համագործակցեն ինչպես միմյանց, այնպես էլ աջակցություն ցուցաբերող համապատասխան կազմակերպությունների հետ՝ զոհերի բացահայտման՝ հաշվի առնելով կանանց և երեխաների շարքից զոհերի առանձնահատկությունները, և անհրաժեշտության դեպքում սույն Կոնվենցիայի 14 հոդվածով սահմանված կարգով նրանց կացության կարգավիճակ տրամադրելու նպատակով:

2. Անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք հարկավոր են զոհերի բացահայտման համար՝ համագործակցելով մյուս կողմերի և համապատասխան կազմակերպությունների հետ: Այն դեպքում, երբ իրավասու մարմինները հիմքեր ունեն ենթադրելու, որ այս կամ այն անձը թրաֆիքինգից տուժած է, յուրաքանչյուր կողմ պետք է ապահովի, որպեսզի այդ անձը գտնվի իր տարածքում այնքան ժամանակ, քանի դեռ իրավասու մարմինը չի ավարտել

որպես սույն Կոնվենցիայի 18 հոդվածով նախատեսված հանցավոր արարքից տուժածի անձի հաստատման գործընթացը, և որպես այդպիսին օգտվի 12 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված օժանդակությունից:

3. Այն դեպքում, երբ տուժածի տարիքն անհայտ է, և հիմքեր կան ենթադրելու, որ նա երեխա է, մինչև նրա տարիքը որոշելը, նա պետք է համարվի երեխա և օգտվի պաշտպանության հատուկ միջոցներից:

4. Այն դեպքում, երբ հաստատվում է չուղեկցվող երեխայի թրաֆիքինգից տուժած լինելու հանգամանքը, յուրաքանչյուր կողմ պետք է.

ա) ապահովի երեխայի շահերի ներկայացուցչությունը օրինական խնամակալի, այլ կազմակերպության կամ լիազորության կողմից, որը լավագույնս կգործի՝ ելնելով այդ երեխայի լավագույն շահերից,

բ) անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի նրա անձը և ազգությունը հաստատելու ուղղությամբ,

գ) ջանքեր գործադրի նրա ընտանիքը հայտնաբերելու ուղղությամբ, եթե դա բխում է երեխայի լավագույն շահերից:

#### *Հոդված 11*

##### *Մասնավոր կյանքի պաշտպանությունը*

1. Յուրաքանչյուր կողմ պետք է պաշտպանի գոհերի անձը և մասնավոր կյանքը: Նրանց անձնական տվյալները պետք է պահպանվեն և օգտագործվեն Անձնական բնույթի տվյալների ավտոմատացված մշակման առնչությամբ անհատ անձանց պաշտպանության մասին կոնվենցիայի դրույթներին համապատասխան (Եվրոպական պայմանագրերի ժողովածու No. 108):

2. Յուրաքանչյուր կողմ պետք է, մասնավորապես, ապահովի, որպեսզի թրաֆիքինգից տուժած երեխայի անձի կամ անձնական տվյալների վերաբերյալ տեղեկատվությունը չհրապարակվի զանգվածային լրատվության կամ այլ միջոցներով, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է նրա ընտանիքի անդամներին հայտնաբերելու կամ որևէ այլ կերպ երեխայի բարեկեցությունը և պաշտպանությունը ապահովելու համար:

3. Յուրաքանչյուր կողմ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 10 հոդվածի վերաբերյալ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի մեկնաբանություններին համապատասխան, պետք է ի նկատի ունենա ձեռնարկելու միջոցներ՝ ուղղված զանգվածային լրատվության միջոցների գործունեության խրախուսմանը՝ ինքնակարգավորման միջոցով կամ

կարգավորիչ կամ համակարգավորիչ միջոցներ գործադրելով զոհերի անձի և մասնավոր կյանքի պաշտպանության համար:

#### *Հոդված 12*

##### *Օժանդակությունը զոհերին*

1. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են զոհերի ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական վերականգնման համար: Այդպիսի օժանդակությունը պետք է առնվազն ներառի.

ա) գոյատևման համար անհրաժեշտ կենսապայմաններ, մասնավորապես, պատշաճ և ապահով կացարան, հոգեբանական ու նյութական օգնություն,

բ) շտապ բուժ. օգնություն ստանալու հնարավորություն,

գ) անհրաժեշտության դեպքում բանավոր և գրավոր թարգմանության ծառայություններ,

դ) իրենց հասկանալի լեզվով խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում, մասնավորապես իրենց իրավունքների ու այն ծառայությունների վերաբերյալ, որոնցից կարող են օգտվել,

ե) քրեական դատավարության համապատասխան փուլերի ընթացքում ընդդեմ իրավազանցի իրենց իրավունքների ու շահերի ներկայացման հարցում օժանդակություն,

զ) երեխաների համար կրթություն ստանալու հնարավորություն:

2. Յուրաքանչյուր կողմ պետք է պատշաճ ուշադրություն դարձնի տուժածի անվտանգության և պաշտպանության կարիքներին:

3. Դրա հետ մեկտեղ յուրաքանչյուր կողմ պետք է անհրաժեշտ բժշկական և այլ օգնություն տրամադրի իր տարածքում օրինական հիմքով բնակվող այն զոհերին, որոնք այդպիսի օգնության կարիք ունեն, սակայն չունեն բավարար միջոցներ դրա համար:

4. Յուրաքանչյուր կողմ պետք է սահմանի կանոններ, որոնց համապատասխան իր տարածքում օրինական հիմքով բնակվող զոհերին կընձեռվի աշխատուժի շուկայից օգտվելու, ինչպես նաև մասնագիտական պատրաստման ու կրթության հնարավորություն:

5. Անհրաժեշտության դեպքում և իր ներքին օրենսդրությամբ սահմանված կարգով յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի միջոցներ զոհերին օժանդակության խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների, այլ համապատասխան կառույցների և քաղաքացիական հասարակության մյուս տարրերի հետ համագործակցության ուղղությամբ:

6. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի օրենսդրական կամ այլ անհրաժեշտ միջոցներ, որոնք կբացառեն որպես վկա հանդես գալու պատրաստակամության պայմանով տուժածին օգնություն տրամադրելու հնարավորությունը:

7. Սույն հոդվածում ամրագրված դրույթների իրականացման նպատակով յուրաքանչյուր կողմ պետք է ապահովի, որպեսզի զոհերին ծառայությունները մատուցվեն նրանց համաձայնության և իրազեկության պայմաններում՝ հաշվի առնելով խոցելի իրավիճակում հայտնված անձանց հատուկ կարիքները և երեխաների իրավունքները՝ հարմարությունների, կրթության և առողջության պահպանման հարցերում:

### *Հոդված 13*

#### *Վերականգնման և խորհրդածության, կշռադատման ժամանակահատված*

1. Յուրաքանչյուր կողմ իր ներքին օրենսդրության մեջ տուժած համարվող անձանց համար պետք է սահմանի առնվազն 30 օր տևողությամբ վերականգնման և խորհրդածության, կշռադատման ժամկետ, եթե ողջամիտ հիմքեր կան ենթադրելու, որ տվյալ անձը տուժված է: Այդ ժամկետը պետք է բավարար լինի տվյալ անձի վերականգնման և թափփոխման գրադրողների ազդեցությունից ազատվելու և/կամ իրավասու մարմինների հետ համագործակցության վերաբերյալ իրազեկ որոշում ընդունելու համար: Այս ժամանակահատվածի ընթացքում նրա նկատմամբ չի կարող կիրառվել վտարման մասին որևէ որոշում: Այս դրույթը չպետք է խոչընդոտի իրավասու մարմինների գործունեությանը ազգային օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի որևէ փուլում և, մասնավորապես, հանցագործությունների քննության և հետապնդման ընթացքում: Այս ժամանակահատվածի ընթացքում կողմերը պետք է այդ անձանց թույլատրեն գտնվել իրենց տարածքում:

2. Այս ժամանակահատվածի ընթացքում սույն հոդվածի 1-ին մասում նշված անձանց վրա պետք է տարածվեն 12 հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նախատեսված միջոցները:

3. Կողմերը պարտավոր չեն պահպանել այս ժամկետը, եթե դա կարող է հանգեցնել հասարակական կարգի խախտման կամ եթե պարզվի, որ տուժածի կարգավիճակ ստանալու վերաբերյալ պահանջն անհիմն է:

### *Հոդված 14*

#### *Կացության կարգավիճակի թույլտվություն*

1. Յուրաքանչյուր կողմ պետք է զոհերին երկարաձգվող կացության կարգավիճակ տրամադրի հետևյալ դեպքերից մեկի կամ մյուսի դեպքում, կամ երկու դեպքերում էլ.

ա) երբ իրավասու մարմինը գտնում է, որ զոհերի գտնվելն իր պետության տարածքում անհրաժեշտ է՝ կապված նրանց անձնական բնույթի հանգամանքների հետ,

բ) երբ իրավասու մարմինը գտնում է, որ զոհերի գտնվելն իր պետության տարածքում անհրաժեշտ է հանցագործությունների քննության ընթացքում իրավասու մարմինների հետ նրանց համագործակցության նպատակով:

2. Տուժած երեխաներին կացության կարգավիճակը պետք է տրամադրվի և անհրաժեշտության դեպքում երկարաձգվի, երբ դա իրավաբանորեն անհրաժեշտ է՝ ելնելով երեխայի շահերից:

3. Կացության կարգավիճակի երկարաձգման մերժումը կամ դրանից զրկելու հետ կապված հարցերը կարգավորվում են տվյալ կողմի ներքին օրենսդրությամբ:

4. Երբ տուժածը դիմում է ներկայացնում այլ կացության կարգավիճակ ստանալու վերաբերյալ, տվյալ կողմը պետք է հաշվի առնի, որ նա սույն հոդվածի 1-ին մասի համաձայն ունի կամ ունեցել է կացության կարգավիճակ:

5. Հաշվի առնելով սույն Կոնվենցիայի 40 հոդվածում ամրագրված պարտավորությունները՝ յուրաքանչյուր կողմ պետք է ապահովի, որ այս դրույթին համապատասխան կարգավիճակի տրամադրումը չխախտի ապաստան փնտրելու և դրանից օգտվելու իրավունքը:

#### *Հոդված 15*

##### *Փոխհատուցում և իրավական վերականգնում*

1. Յուրաքանչյուր կողմ պետք է ապահովի զոհերի համար իրավասու մարմինների հետ առաջին իսկ շփումից հետո համապատասխան դատական և վարչական ընթացակարգերի վերաբերյալ իրենց համար հասկանալի լեզվով տեղեկատվության մատչելիությունը:

2. Յուրաքանչյուր կողմ իր ներքին օրենսդրության մեջ պետք է ամրագրի զոհերի՝ իրավաբանական օգնություն, իսկ օրենքով նախատեսված դեպքերում անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը:

3. Յուրաքանչյուր կողմ իր ներքին օրենսդրության մեջ պետք է ամրագրի զոհերի՝ հանցագործից փոխհատուցում ստանալու իրավունքը:

4. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են ներքին օրենսդրությանը համապատասխան զոհերի վնասների

փոխհատուցումը երաշխավորելու համար, օրինակ, զոհերի վնասների փոխհատուցման հիմնադրամ ստեղծելու կամ այնպիսի միջոցառումներ կամ ծրագրեր իրականացնելու միջոցով, որոնք ուղղված են զոհերի սոցիալական օգնությանը և սոցիալական ինտեգրացիային և որոնք կարող են ֆինանսավորվել 23 հոդվածում նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած միջոցների հաշվին:

#### *Հոդված 16*

##### *Տուժածների հայրենադարձությունը և վերադարձը*

1. Այն կողմը, որի քաղաքացին է տուժածը կամ որի տարածքում մշտական բնակության իրավունք ունի, վերջինիս՝ ընդունող պետության տարածք մուտք գործելու դեպքում պետք է օժանդակի առանց անհարկի և ան- ընդունելի ձգձգումների նրա վերադարձին՝ պատշաճ կերպով հաշվի առնելով տուժածի իրավունքները, անվտանգությունն ու արժանապատվությունը:

2. Երբ կողմերից մեկը տուժածին վերադարձնում է մեկ այլ պետության, անհրաժեշտ է հաշվի առնել այդ անձի իրավունքները, անվտանգությունն ու արժանապատվությունը և այն իրավաբանական ընթացակարգերը, որոնք կապված են անձի տուժած լինելու փաստի հետ: Նախընտրելի է, որ վերադարձը լինի կամավոր:

3. Ընդունող կողմի պահանջով մյուս կողմը պետք է հաստատի, որ ընդունող կողմի տարածք մուտք գործելու ժամանակ տվյալ անձը իր քաղաքացին էր կամ իր տարածքում մշտական բնակության իրավունք ուներ:

4. Անհրաժեշտ փաստաթղթեր չունեցող տուժածի վերադարձմանը օժանդակելու նպատակով այն կողմը, որի քաղաքացին է նա կամ որի տարածքում մշտական բնակության իրավունք ունի ընդունող պետության տարածք մուտք գործելու ժամանակ, պետք է համաձայնի ընդունող կողմի պահանջով նրան տրամադրել համապատասխան ճամփորդական փաստաթղթեր կամ այլ թույլտվություն իր պետության տարածք կրկին մուտք գործելու համար:

5. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են հայրենադարձության ծրագրեր մշակելու համար՝ ներգրավելով համապատասխան ազգային կամ միջազգային կառույցներ ու հասարակական կազմակերպություններ: Այդ ծրագրերը ուղղված են խուսափելու կրկնակի զոհականացումից (վիկտիմիզացիայից): Յուրաքանչյուր կողմ պետք է բոլոր հնարավոր միջոցներով նպաստի զոհերի՝ վերադարձնող պետության հասարակության մեջ վերաինտեգրմանը, այդ թվում կրթական համակարգից և աշխատուժի շուկայից օգտվելու

հնարավորությունների տեսակետից, մասնավորապես մասնագիտական հմտություններ ձեռք բերելու և դրանք բարելավելու միջոցով: Այդ ծրագրերը երեխաների համար պետք է նախատեսեն կրթության իրավունքից օգտվելու հնարավորություն, ինչպես նաև անհրաժեշտ խնամքի ապահովմանը, կամ ընտանիքներ կամ համապատասխան հաստատություններ նրանց ընդունելուն ուղղված միջոցներ:

6. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են զոհերին այն կառույցների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու համար՝ առանձին դեպքերում համագործակցելով նաև ցանկացած այլ կողմի հետ, որոնք կարող են նրանց օգնություն ցույց տալ այն երկրում, ուր նրանք վերադարձել կամ հայրենադարձվել են, այն է՝ իրավապահ մարմիններ, հասարակական կազմակերպություններ, իրավաբանական մասնագետներ, որոնք ի վիճակի են կատարելու խորհրդատվություն և սոցիալական օգնության մարմիններ:

7. Տուժած երեխաները չպետք է վերադարձվեն որևէ պետություն, եթե, գնահատելով ռիսկերն ու անվտանգության խնդիրները, հիմքեր կան ենթադրելու, որ դա չի բխում նրանց լավագույն շահերից:

#### *Հոդված 17*

##### *Գենդերային հավասարություն*

Յուրաքանչյուր կողմ սույն գլխում նշված միջոցները ձեռնարկելիս պետք է ապահովի գենդերային հավասարությունը և դրանց մշակման, իրականացման ու գնահատման հարցում հանդես գա գենդերային առաջնության դիրքերից:

#### **Գլուխ IV Քրեական իրավունք**

#### *Հոդված 18*

##### *Մարդկանց թրաֆիքինգի քրեականացումը*

Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են սույն Կոնվենցիայի 4 հոդվածում նախատեսված արարքները քրեորեն պատժելի դարձնելու համար, երբ դրանք կատարվել են դիտավորությամբ:

#### *Հոդված 19*

##### *Տուժածի ծառայություններից օգտվելու քրեականացումը*

Յուրաքանչյուր կողմ պետք է նախատեսի ձեռնարկել այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են ներքին օրենսդրությամբ քրեորեն պատժելի դարձնել սույն Կոնվենցիայի 4 հոդվածի «ա» կետում թվարկված՝ շահագործման առարկա դարձած ծառայություններից օգտվելու հանգամանքը եթե կատարողն իմացել է անձի թրաֆիքինգից տուժած լինելու մասին:

#### *Հոդված 20*

*Ճամփորդական կամ անձը հաստատող փաստաթղթերի հետ կապված արարքների քրեականացումը*

Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են հետևյալ արարքները քրեորեն պատժելի դարձնելու համար, եթե դրանք կատարվել են դիտավորությամբ և մարդկանց թրաֆիքինգի նպատակով.

- ա) Ճամփորդական կամ անձը հաստատող փաստաթուղթ կեղծելը,
- բ) այդպիսի փաստաթուղթ ձեռք բերելը կամ տրամադրելը,
- գ) մեկ այլ անձի պատկանող Ճամփորդական կամ անձը հաստատող փաստաթուղթը պահելը, տեղափոխելը, թաքցնելը, վնասելը կամ ոչնչացնելը:

#### *Հոդված 21*

*Հանցափորձ և օժանդակում կամ դրդում*

1. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են սույն Կոնվենցիայի 18 և 20 հոդվածներում նախատեսված հանցավոր արարքների կատարման կամ դրդման օժանդակությունը քրեորեն պատժելի դարձնելու համար, եթե դրանք կատարվել են դիտավորությամբ:

2. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են սույն Կոնվենցիայի 18 հոդվածում և 20 հոդվածի «ա» կետում նախատեսված հանցավոր արարքների կատարման փորձը քրեորեն պատժելի դարձնելու համար, եթե դա կատարվել է դիտավորությամբ:

#### *Հոդված 22*

*Իրավաբանական անձանց պատասխանատվությունը*

1. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ անհրաժեշտ միջոցներ, որոնք կապահովեն սույն Կոնվենցիայով նախատեսված այնպիսի հանցավոր արարքների համար իրավաբանական անձի պատասխանատվությունը, որոնք կատարվել են վերջինիս օգտին ցանկացած ֆիզիկական անձի կողմից՝ գործելով կամ

անհատականորեն, կամ որպես իրավաբանական անձի որևէ մարմնի մաս, որն այդտեղ ղեկավար պաշտոն է զբաղեցնում և.

- ա) լիազորված է ներկայացնել այդ իրավաբանական անձը,
- բ) իրավասու է իրավաբանական անձի անունից ընդունել որոշումներ,
- գ) իրավասու է իրավաբանական անձի ներսում իրականացնել վերահսկողություն:

2. Բացի 1-ին մասում նշված դեպքերից, յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ միջոցներ, որոնք կապահովեն սույն Կոնվենցիայով նախատեսված այնպիսի հանցավոր արարքների համար իրավաբանական անձի պատասխանատվությունը, որոնք կատարվել են այդ իրավաբանական անձի օգտին իր լիազորությունների շրջանակներում գործող՝ 1-ին մասում նշված ֆիզիկական անձի կողմից՝ հսկողության կամ վերահսկողության բացակայության հետևանքով:

3. Կախված տվյալ կողմի իրավական համակարգի առանձնահատկություններից, իրավաբանական անձի պատասխանատվությունը կարող է լինել քրեական, քաղաքացիական կամ վարչական:

4. Պատասխանատվության այս ձևը չի բացառում տվյալ հանցավոր արարքը կատարած ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվությունը:

### *Հոդված 23*

#### *Սանկցիաներ և միջոցներ*

1. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի օրենսդրական և այլ անհրաժեշտ միջոցներ 18 - 21 հոդվածներում նշված հանցավոր արարքների համար արդյունավետ, համամասնական և (տար)հանդուժիչ նշանակություն ունեցող պատիժներ նախատեսող սանկցիաներ սահմանելու համար: 18 հոդվածում նշված՝ ֆիզիկական անձանց կողմից կատարված հանցավոր արարքների համար սանկցիաները պետք է նախատեսեն տարբեր պատիժներ, ներառյալ ազատազրկում, որը կարող է առաջացնել հանձնում:

2. Յուրաքանչյուր կողմ պետք է 22 հոդվածի համաձայն պատասխանատվության ենթարկված իրավաբանական անձանց համար սահմանի արդյունավետ, համամասնական և տարհանդուժիչ նշանակություն ունեցող քրեական կամ ոչ քրեական բնույթի պատիժներ, այդ թվում՝ դրամական սանկցիաներ:

3. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են սույն Կոնվենցիայի 18 հոդվածում և 20 հոդվածի «ա» կետում նախատեսված հանցավոր արարքների կատարման գործիքների և հանցավոր

ճանապարհով ձեռք բերված եկամուտների կամ գույքի, որի արժեքը համապատասխանում է այդ եկամուտների չափին, բռնագրավումը կամ որևէ այլ եղանակով առգրավումն ապահովելու համար:

4. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են, առանց օրինավոր, բարեխիղճ երրորդ անձանց իրավունքները խախտելու, մարդկանց թրաֆիքինգով զբաղվող ցանկացած հաստատության գործունեությունը ժամանակավորապես կամ մշտապես դադարեցնելու, կամ հանցավորին ժամանակավորապես կամ մշտապես այնպիսի գործունեությամբ զբաղվելն արգելելու համար, որը նպաստել է այդ հանցավոր արարքի կատարմանը:

#### *Հոդված 24*

##### *Ծանրացնող հանգամանքներ*

Յուրաքանչյուր կողմ պետք է ապահովի, որ սույն Կոնվենցիայի 18 հոդվածում նախատեսված հանցավոր արարքների կատարման համար պատիժները որոշելիս հետևյալ հանգամանքները համարվեն ծանրացնող.

ա) դիտավորությամբ կամ մեծ անփութությամբ կատարված հանցավոր արարքը սպառնալիք է ստեղծել տուժածի կյանքի համար,

բ) հանցավոր արարքը կատարվել է երեխայի նկատմամբ,

գ) հանցավոր արարքը կատարվել է պետական պաշտոնյաի կողմից՝ իր պաշտոնական պարտականությունները կատարելիս,

դ) հանցավոր արարքը կատարվել է հանցավոր կազմակերպության շրջանակներում:

#### *Հոդված 25*

##### *Նախկին դատվածություններ*

Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք հնարավորություն կտան սույն Կոնվենցիայում նախատեսված հանցավոր արարքների կատարման համար պատիժները որոշելիս հաշվի առնել մեկ այլ կողմի դատարանների կայացրած դատավճիռները:

#### *Հոդված 26*

##### *Պատիժ չկիրառելու հնարավորությունը*

Յուրաքանչյուր կողմ, ելնելով իր իրավական համակարգի հիմնական սկզբունքներից, պետք է նախատեսի զոհերի նկատմամբ նրանց ապօրինի

գործողությունների համար պատիժ չկիրառելու հնարավորություն այն դեպքում, երբ նրանց նկատմամբ հարկադրանք է գործադրվել այդպիսի վարքագիծ դրսևորելու համար:

## **Գլուխ V Քննություն, քրեական հետապնդում և դատավարական իրավունք**

### *Հոդված 27*

*Շահագրգիռ կողմից (Ex parte) և իրավասու մարմնի պաշտոնյայի կողմից (ex officio) դիմումներ*

1. Յուրաքանչյուր կողմ պետք է ապահովի, որ սույն Կոնվենցիայում նախատեսված հանցավոր արարքների քննությունը կամ դրանցով իրականացվող քրեական հետապնդումը կախված չլինի միայն տուժածի ցուցմունքներից կամ նրա հարուցած մեղադրանքներից, համեմայն դեպս այն ժամանակ, երբ հանցավոր արարքն ամբողջովին կամ մասամբ կատարվել է իր տարածքում:

2. Յուրաքանչյուր կողմ պետք է ապահովի, որ թրաֆիքինգից զոհերը, գտնվելով կողմերից որևէ մեկի տարածքում, որտեղ նրանք չեն բնակվում, հնարավորություն ունենան գանգատ ներկայացնել իրենց պետության իրավասու մարմիններին: Այն դեպքում, երբ համապատասխան մարմինը, որին ներկայացվել է գանգատը, իրավասու չէ տվյալ հարցում, նա պետք է անհապաղ գանգատը փոխանցի այն կողմի իրավասու մարմնին, որի տարածքում կատարվել է հանցանքը: Գանգատի հետ կապված հարցերը կարգավորվում են այն կողմի ներքին օրենսդրությամբ, որի տարածքում կատարվել է հանցանքը:

3. Յուրաքանչյուր կողմ, համաձայն իր ներքին օրենսդրությամբ նախատեսված պայմանների, պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի կամ մարդու իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող ցանկացած խմբին, հիմնադրամին, ընկերակցությանը կամ հասարակական կազմակերպություններին հնարավորություն կտան տուժածի համաձայնությամբ օգնել և/կամ աջակցել նրան սույն Կոնվենցիայի 18 հոդվածում նախատեսված հանցավոր արարքների վերաբերյալ գործերի դատական քննության ընթացքում:

### *Հոդված 28*

*Տուժածների, վկաների և քննությանը օգնություն ցույց տվող անձանց պաշտպանությունը դատական մարմինների կողմից*

1. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են հետևյալ կատեգորիայի անձանց վրեժի հնարավոր հատուցումից կամ

սպառնալիքից արդյունավետ պաշտպանելու համար, մասնավորապես հանցանքը կատարած անձանց վերաբերյալ քննության և քրեական հետապնդման ընթացքում և դրանից հետո.

ա) զոհեր,

բ) նրանք, ովքեր հայտնել են սույն Կոնվենցիայի 18 հոդվածում նախատեսված հանցավոր արարքների մասին կամ որևէ այլ կերպ համագործակցել են քննությունը վարող կամ քրեական հետապնդման մարմինների հետ,

գ) սույն Կոնվենցիայի 18 հոդվածում նախատեսված հանցավոր արարքների վերաբերյալ ցուցմունք տված վկաներ,

դ) անհրաժեշտության դեպքում՝ «ա» և «գ» կետերում նշված անձանց ընտանիքի անդամները:

2. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են տարբեր տեսակի օգնություն ապահովելու ու տրամադրելու համար: Ռա կարող է ներառել ֆիզիկական պաշտպանությունը, բնակության վայրի ու անձնական տվյալների փոփոխությունը և աշխատանքի տեղավորելու հարցում օժանդակությունը:

3. Տուժած երեխայի համար, նրա շահերից ելնելով, պետք է ապահովվեն հատուկ պաշտպանության միջոցներ:

4. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են 27 հոդվածի 3-րդ մասում նշված գործունեությամբ զբաղվող խմբերի, հիմնադրամների, ընկերակցությունների կամ հասարակական կազմակերպությունների անդամներին վրեժի հնարավոր հատուցումից կամ սպառնալիքից արդյունավետ պաշտպանելու համար, մասնավորապես հանցանքը կատարած անձանց վերաբերյալ քննության և քրեական հետապնդման ընթացքում և դրանից հետո:

5. Յուրաքանչյուր կողմ պետք է քննարկի սույն հոդվածի կիրառումն ապահովելու նպատակով այլ պետությունների հետ համաձայնագրեր կնքելու կամ պայմանավորվածություններ ձեռք բերելու հնարավորությունը:

#### *Հոդված 29*

#### *Մասնագիտացված մարմիններ և համակարգող կառույցներ*

1. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են թրաֆիքինգի դեմ պայքարի և զոհերի պաշտպանության ոլորտում մասնագիտացած անձանց պատրաստման կամ կառույցների ստեղծման համար: Այդ անձինք կամ կառույցները տվյալ կողմի իրավական համակարգի հիմնարար սկզբունքների և համապատասխան պետք է օժտված լինեն բովանականաչափ ինքնուրույնությամբ իրենց

գործառույթներն արդյունավետ և որևէ ճնշման բացակայության պայմաններում իրականացնելու համար: Նշված անձինք կամ այդ կառույցների անձնակազմի անդամները պետք է պատշաճ կերպով պատրաստված լինեն և ունենան բավարար ֆինանսական միջոցներ իրենց խնդիրներն իրագործելու համար:

2. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են գործադիր իշխանության մարմինների և պետական այլ հաստատությունների՝ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագրերը և գործողությունները համակարգելու համար՝ անհրաժեշտության դեպքում համակարգող կառույցներ ստեղծելու միջոցով:

3. Յուրաքանչյուր կողմ պետք է կազմակերպի համապատասխան պաշտոնատար անձանց ուսուցումը մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման և դրա դեմ պայքարի, այդ թվում նաև մարդու իրավունքների բնագավառում: Ուսուցումը կարող է հարմարեցված լինել տվյալ կառույցի գործունեության առանձնահատկություններին և պետք է վերաբերի թրաֆիքինգի կանխարգելման, թրաֆիքինգով զբաղվող անձանց քրեորեն հետապնդելու և զոհերի իրավունքների պաշտպանության, ներառյալ թրաֆիքինգով զբաղվողներից զոհերի պաշտպանության մեթոդներին:

4. Յուրաքանչյուր կողմ պետք է քննարկի ազգային զեկուցողներ նշանակելու կամ այլ մեխանիզմներ ստեղծելու հնարավորությունը՝ պետական հաստատությունների հակաթրաֆիքինգային գործունեությունը վերահսկելու և ազգային օրենսդրության պահանջները կատարելու համար:

### *Հոդված 30*

#### *Ղատական քննություն*

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի, մասնավորապես դրա 6 հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են ղատական քննության ընթացքում

ա) զոհերի մասնավոր կյանքը և համապատասխան դեպքերում անձի ինքնությունը պաշտպանելու համար,

բ) զոհերի անվտանգությունն ապահովելու և նրանց սպառնալիքից պաշտպանելու համար,

իսկ այն դեպքում, երբ զոհերը երեխաներ են՝ նրանց կարիքները հատուկ հոգալու և հատուկ պաշտպանության միջոցներից օգտվելու նրանց իրավունքն ապահովելու համար, համաձայն ներքին օրենսդրությամբ սահմանված պայմանների:

### Հոդված 31

#### Իրավագործությունը

1. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են սույն Կոնվենցիայում նախատեսված ցանկացած հանցավոր արարքի վրա իր իրավագործությունը տարածելու համար, եթե այն կատարվել է.

ա) իր տարածքում, կամ

բ) իր դրոշի ներքո նավարկող նավի վրա, կամ

գ) իր օրենսդրությանը համապատասխան գրանցված օդանավում, կամ

դ) իր քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի կողմից, որն իր տարածքում ունի կանոնավոր բնակության վայր, եթե այդ արարքը քրեորեն պատժելի է համարվում այն պետության քրեական օրենսդրության համաձայն, որտեղ կատարվել է, կամ եթե այն կատարվել է որևէ պետության տարածքային իրավագործությունից դուրս,

ե) իր քաղաքացու նկատմամբ:

2. Յուրաքանչյուր կողմ կարող է Կոնվենցիայի ստորագրման, կամ վավերագիրը, Կոնվենցիան ընդունելու, հաստատելու կամ դրան միանալու մասին փաստաթուղթն ավանդապահին հանձնելու ժամանակ վերապահում անել սույն հոդվածի 1-ին մասի «դ» և «ե» կետերում սահմանված իրավագործության կանոնները չկիրառելու կամ միայն հատուկ դեպքերում կիրառելու վերաբերյալ՝ այդ մասին ծանուցելով Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին:

3. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են սույն Կոնվենցիայում նախատեսված հանցավոր արարքների վրա իր իրավագործությունը տարածելու համար, այն դեպքում, երբ հանցանքը կատարելու մեջ մեղադրվող անձը գտնվում է իր տարածքում, և հանձնման մասին պահանջը ստանալուց հետո ինքն այդ անձին չի հանձնում մեկ ուրիշ կողմի բացառապես նրա քաղաքացիության հիմքով:

4. Երբ սույն Կոնվենցիայով նախատեսված որևէ հանցավոր արարքի վրա իրենց իրավագործությունը տարածելու հավակնություն ունեն մեկից ավելի կողմեր, նրանք անհրաժեշտության դեպքում պետք է խորհրդակցեն՝ քրեական հետապնդման համար ամենապատշաճ իրավագործությունը որոշելու նպատակով:

5. Չխախտելով միջազգային իրավունքի ընդհանուր նորմերը՝ սույն Կոնվենցիան չի բացառում կողմերից որևէ մեկի կողմից իր ներքին օրենսդրությանը համապատասխան քրեական իրավագործություն իրականացնելու հնարավորությունը:

## **Գլուխ VI Միջազգային համագործակցություն և համագործակցություն քաղաքացիական հասարակության հետ**

### *Հոդված 32*

#### *Միջազգային համագործակցության ընդհանուր սկզբունքները և եղանակները*

Կողմերը պետք է համագործակցեն միմյանց հետ սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան և լայնորեն կիրառելով համապատասխան միջազգային ու տարածաշրջանային փաստաթղթերը, միասնական կամ փոխադարձաբար պարտավորեցնող օրենսդրության հիման վրա ձեռք բերված պայմանավորվածությունները

- մարդկանց թրաֆիքինգը կանխարգելելու և դրա դեմ պայքարելու,
- զոհերին պաշտպանելու և օգնություն տրամադրելու,
- սույն Կոնվենցիայով նախատեսված հանցավոր արարքների վերաբերյալ գործերը քննելու և դատավարելու նպատակով:

### *Հոդված 33*

#### *Վտանգի ենթարկված կամ անհայտ կորած անձանց վերաբերյալ ձեռնարկվող միջոցներ*

1. Երբ կողմերից որևէ մեկն իր տրամադրության տակ եղած տեղեկատվության հիման վրա ողջամիտ հիմքեր ունի ենթադրելու, որ 28 հոդվածի 1-ին մասում նշված անձի կյանքին, ազատությանը կամ ֆիզիկական անվտանգությանը մեկ այլ կողմի տարածքում անմիջական վտանգ է սպառնում, նա նման արտակարգ իրավիճակում պետք է անհապաղ մյուս կողմին փոխանցի այդ տեղեկատվությունը՝ նշված անձի պաշտպանության համար համապատասխան միջոցներ ձեռնարկելու նպատակով:
2. Սույն Կոնվենցիայի կողմերը կարող են քննարկել անհայտ կորած անձանց, մասնավորապես անհայտ կորած երեխաների որոնման հարցում իրենց համագործակցությունն ուժեղացնելու հնարավորությունը, եթե առկա տեղեկատվությունը հիմք է տալիս ենթադրելու, որ այս կամ այն անձը թրաֆիքինգից տուժած է: Այս նպատակով կողմերը կարող են միմյանց հետ կնքել երկկողմ կամ բազմակողմ պայմանագրեր:

### *Հոդված 34*

#### *Տեղեկատվությունը*

1. Կողմերից որևէ մեկը պետք է մյուս կողմի պահանջով հնարավորինս սեղմ ժամկետներում նրան տեղեկացնի սույն գլխի դրույթներին համապատասխան ձեռնարկված միջոցների վերջնական արդյունքի մասին: Նա պետք է մյուս կողմին տեղեկացնի նաև այն հանգամանքների մասին, որոնք անհնարին են դարձնում համապատասխան միջոցների ձեռնարկումը կամ զգալիորեն դրանք հետաձգում են:
2. Կողմերից որևէ մեկը կարող է իր ներքին օրենսդրությանը համապատասխան առանց նախնական պահանջի մյուս կողմին տրամադրել տեղեկատվություն, որը ձեռք է բերվել իր կողմից իրականացված քննության ընթացքում, եթե հիմքեր կան ենթադրելու, որ այդ տեղեկատվության հրապարակումը կարող է օգնել մյուս կողմին սույն Կոնվենցիայով նախատեսված հանցավոր արարքների վերաբերյալ գործերի քննությունը կամ դատավարությունը նախաձեռնելու կամ իրականացնելու հարցում կամ կարող է այդ կողմի հետ սույն գլխի դրույթներին համապատասխան համագործակցության հիմք հանդիսանալ:
3. Նախքան տեղեկատվության տրամադրումը տեղեկատվությունը տրամադրող կողմը կարող է պահանջել, որ այն պահվի գաղտնի կամ օգտագործվի որոշակի պայմանների պահպանմամբ: Եթե տեղեկատվությունը ստացող կողմը չի կարող կատարել այդ պահանջները, նա այդ մասին պետք է հայտնի տեղեկատվությունը տրամադրող կողմին,

որն էլ պետք է որոշի՝ տրամադրի այն, թե՛ ոչ: Եթե մյուս կողմն ընդունում է այդ տեղեկատվությունը, նա պարտավոր է կատարել դրա օգտագործման համար սահմանված պայմանները:

4. 13, 14 ու 16 հոդվածների վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է այդ հոդվածներով նախատեսված իրավունքներն ապահովելու համար, պետք է առանց հետաձգելու տրամադրվի այն կողմին, որը պահանջել է այդ տեղեկատվությունը, հաշվի առնելով սույն Կոնվենցիայի 11 հոդվածի պահանջները:

#### *Հոդված 35*

##### *Համագործակցությունը քաղաքացիական հասարակության հետ*

Յուրաքանչյուր կողմ պետք է խրախուսի պետական մարմինների ու պաշտոնատար անձանց համագործակցությունը հասարակական կազմակերպությունների, այլ համապատասխան կառույցների և քաղաքացիական հասարակության անդամների հետ սույն Կոնվենցիայի նպատակին հասնելու համար ռազմավարական գործընկերություն հաստատելու հարցում:

## **Գլուխ VII Մոնիտորինգի մեխանիզմ**

#### *Հոդված 36*

##### *Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագետների խումբ*

1. Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագետների խումբը (այսուհետ՝ ՄԹՊՓԽ) պետք է իրականացնի սույն Կոնվենցիայի կատարման մոնիտորինգ:

2. ՄԹՊՓԽ-ն պետք է կազմված լինի նվազագույնը 10 և առավելագույնը 15 անդամներից՝ հաշվի առնելով գենդերային և աշխարհագրական հավասար ներկայացուցչության սկզբունքը, ինչպես նաև բազմապրոֆիլ փորձաքննության հնարավորությունը: Նրանք ընտրվում են Կողմերի կոմիտեի կողմից, 4 տարի ժամկետով, մեկ անգամ վերընտրվելու հնարավորությամբ՝ սույն Կոնվենցիայի անդամ պետությունների քաղաքացիների թեկնածությամբ:

3. ՄԹՊՓԽ-ի անդամների ընտրությունը պետք է հիմնված լինի հետևյալ սկզբունքների վրա.

ա) նրանք պետք է ընտրվեն բարձր բարոյական հատկանիշներ ունեցող, մարդու իրավունքների, մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի և զոհերի իրավունքների պաշտպանության ու դրանց օժանդակության բնագավառում հեղիանկություն վայելող կամ

սույն Կոնվենցիայի գործողության ոլորտներում մասնագիտական փորձառություն ունեցող անձանց թվից,

բ) նրանք պետք է հանդես գան անձնապես, իրենց գործառույթներն իրականացնելիս լինեն անկախ ու անկողմնակալ և կարողանան արդյունավետ կատարել իրենց պարտականությունները,

գ) միևնույն պետության երկու քաղաքացիներ չեն կարող լինել ՄԹՊՓԽ-ի անդամներ,

դ) նրանք պետք է ներկայացնեն հիմնական իրավական համակարգերը:

4. ՄԹՊՓԽ-ի անդամների ընտրության ընթացակարգը պետք է սահմանվի Նախարարների կոմիտեի կողմից, սույն Կոնվենցիայի կողմերի հետ խորհրդակցելուց և նրանց միաձայն համաձայնությունը ստանալուց հետո, Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուն հաջորդող մեկ տարվա ընթացքում: ՄԹՊՓԽ-ը պետք է ընդունի իր իսկ կանոնակարգը:

#### *Հոդված 37*

##### *Կողմերի կոմիտե*

1. Կողմերի կոմիտեն պետք է կազմված լինի Նախարարների կոմիտեում սույն Կոնվենցիայի կողմ հանդիսացող Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների և սույն Կոնվենցիայի Եվրոպայի Խորհրդի անդամ չհանդիսացող կողմերի ներկայացուցիչներից:

2. Կողմերի կոմիտեն հրավիրվում է Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարի կողմից: Առաջին նիստը գումարվում է սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուն հաջորդող մեկ տարվա ընթացքում՝ ՄԹՊՓԽ-ի անդամներին ընտրելու նպատակով: Հաջորդ նիստերը գումարվում են կողմերի 1/3-ի, ՄԹՊՓԽ-ի նախագահի կամ Գլխավոր քարտուղարի պահանջով:

3. Կողմերի կոմիտեն ընդունում է իր կանոնակարգը:

#### *Հոդված 38*

##### *Ընթացակարգ*

1. Գնահատման ընթացակարգը վերաբերում է սույն Կոնվենցիայի կողմերին և բաժանվում է փուլերի, որոնց տևողությունը սահմանվում է ՄԹՊՓԽ-ի կողմից: Յուրաքանչյուր փուլի սկզբում ՄԹՊՓԽ-ն պետք է ընտրի այն կոնկրետ դրույթները, որոնց շուրջ պետք է իրականացվի գնահատման ընթացակարգը:

2. ՄԹՊՓԽ-ն պետք է որոշի գնահատումն անցկացնելու համար ամենահարմար միջոցները: Մասնավորապես, ՄԹՊՓԽ-ն կարող է գնահատման յուրաքանչյուր փուլի համար մշակել հարցաշար, որը կարող է հիմք ծառայել սույն Կոնվենցիայի կողմերի կողմից դրա պահանջների կատարումը գնահատելու համար: Այդ հարցաշարը պետք է ներկայացվի բոլոր կողմերին: Կողմերը պետք է պատասխանեն այդ հարցաշարին, ինչպես և ՄԹՊՓԽ-ի կողմից արվող ցանկացած այլ տեղեկատվության հարցումներին:

3. ՄԹՊՓԽ-ն կարող է տեղեկատվություն պահանջել նաև քաղաքացիական հասարակությունից:

4. ՄԹՊՓԽ-ն կարող է պետական մարմինների և դրանց կողմից նշանակված պատասխանատու անձի հետ միասին և անհրաժեշտության դեպքում նաև անկախ ազգային փորձագետների աջակցությամբ լրացուցիչ կազմակերպել այցեր առանձին պետություններ: Այդ այցերի ընթացքում ՄԹՊՓԽ-ին կարող են օգնություն ցույց տալ առանձին ոլորտների մասնագետներ:

5. ՄԹՊՓԽ-ն պետք է պատրաստի զեկույցի նախագիծ, որը կրովանդակի համապատասխան դրույթների կատարման գնահատման վերաբերյալ իր վերլուծությունը, ինչպես նաև տվյալ Կողմին ուղղված իր առաջարկությունները բացահայտված խնդիրները լուծելու վարաբերյալ: Այդ նախագիծը պետք է ներկայացվի գնահատվող կողմին մեկնաբանությունների համար: Նրա մեկնաբանությունները ՄԹՊՓԽ-ի կողմից հաշվի են առնվում զեկույցում:

6. Սրա հիման վրա ՄԹՊՓԽ-ն պետք է ընդունի իր զեկույցը և ներկայացնի իր եզրակացությունն այն միջոցների վերաբերյալ, որոնք համապատասխան կողմը ձեռնարկել է սույն Կոնվենցիայի դրույթները կատարելու համար: Այդ զեկույցը և եզրակացությունը պետք է ներկայացվեն գնահատվող կողմին և Կողմերի կոմիտեին: ՄԹՊՓԽ-ի զեկույցը և եզրակացությունը, համապատասխան կողմի հնարավոր մեկնաբանությունների հետ միասին, ընդունումից հետո պետք է հրապարակվեն:

7. Չխախտելով սույն հոդվածի 1-6 մասերում սահմանված ընթացակարգը՝ Կողմերի կոմիտեն ՄԹՊՓԽ-ի զեկույցի և եզրակացության հիման վրա կարող է ընդունել գնահատվող կողմին հասցեագրված ռեկոմենդացիաներ. ա) այն միջոցների մասին, որոնք պետք է ձեռնարկվեն ՄԹՊՓԽ-ի եզրակացությունները կենսագործելու համար՝ անհրաժեշտության դեպքում սահմանելով կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու ժամկետ, և բ) ուղղված այդ կողմի հետ համագործակցության խրախուսմանը սույն Կոնվենցիայի պատշաճ կատարման համար:

## Գլուխ VIII Կապը այլ միջազգային փաստաթղթերի հետ

### Հոդված 39

*Կապը Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Միավորված Ազգերի Կազմակերպության Կոնվենցիային կից Մարդկանց, հատկապես կանանց ու երեխաների թրաֆիքինգի կանխարգելման, կանխման և դրա համար պատժի մասին Արձանագրության հետ*

Սույն Կոնվենցիան չի ազդում Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Միավորված Ազգերի Կազմակերպության Կոնվենցիային կից Մարդկանց, հատկապես կանանց ու երեխաների թրաֆիքինգի կանխարգելման, կանխման և դրա համար պատժի մասին Արձանագրությունից բխող իրավունքների ու պարտականությունների վրա և ուղղված է դրանում նախատեսված պաշտպանության մեխանիզմի ամրապնդմանն ու սահմանված չափանիշների զարգացմանը:

### Հոդված 40

*Կապը այլ միջազգային փաստաթղթերի հետ*

1. Սույն Կոնվենցիան չի ազդում այլ միջազգային փաստաթղթերից բխող իրավունքների ու պարտականությունների վրա, որոնց մասնակցում են կամ կարող են մասնակցել սույն Կոնվենցիայի կողմերը և որոնք պարունակում են սույն Կոնվենցիայով կարգավորվող հարցերին վերաբերող դրույթներ, ու որոնք թրաֆիքինգից զոհերի համար նախատեսում են ավելի լայն պաշտպանություն և օժանդակություն:

2. Կողմերը կարող են միմյանց հետ կնքել երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրեր Կոնվենցիայով կարգավորվող հարցերի վերաբերյալ՝ վերջինիս դրույթները լրացնելու կամ ամրապնդելու կամ նրանում ամրագրված սկզբունքների կիրառմանը նպաստելու համար:

3. Եվրամիության անդամ կողմերը իրենց փոխհարաբերություններում պետք է կիրառեն Միության և Եվրոպական Համայնքի նորմերը այնքանով, որքանով խնդրո մասնավոր առարկան կարգավորող Եվրամիության կամ Համայնքի այդպիսի նորմեր գոյություն ունեն և կիրառելի են տվյալ դեպքում՝ չխախտելով սույն Կոնվենցիայի առարկան ու նպատակը և չխոչընդոտելով դրա ամբողջական կիրառմանը մյուս կողմերի հետ հարաբերություններում:

4. Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի ազդում պետությունների ու անհատների իրավունքների ու պարտականությունների վրա, որոնք սահմանված են միջազգային

իրավունքով, ներառյալ միջազգային մարդասիրական իրավունքով և միջազգային մարդու իրավունքների իրավունքով, և, մասնավորապես, կիրառելիության դեպքում, Փախստականների կարգավիճակի մասին 1951 թ. Կոնվենցիայով և դրան կից 1967 թ. Արձանագրությամբ, և դրանցում ամրագրված ետ չվերադարձնելու (non-refoulement) սկզբունքով:

## **Գլուխ IX Փոփոխություններ Կոնվենցիայի տեքստում**

### *Հոդված 41*

#### *Փոփոխություններ*

1. Սույն Կոնվենցիայի մեջ որևէ փոփոխություն կատարելու մասին ցանկացած առաջարկություն պետք է ներկայացվի Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին և նրա կողմից ուղարկվի Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններին, բոլոր ստորագրող կողմերին, բոլոր մասնակից պետություններին, Եվրոպական Համայնքին, բոլոր այն պետություններին, որոնք 42 հոդվածի դրույթներին համապատասխան հրավիրված են ստորագրելու սույն Կոնվենցիան, և բոլոր այն պետություններին, որոնք 43 հոդվածի դրույթներին համապատասխան հրավիրված են միանալու սույն Կոնվենցիային:
2. Կողմերից որևէ մեկի կողմից առաջարկվող փոփոխությունը պետք է ներկայացվի ՄԹՊՓԽ-ին, որը Նախարարների կոմիտեին պետք է ներկայացնի իր կարծիքը առաջարկվող փոփոխության վերաբերյալ:
3. Նախարարների կոմիտեն պետք է քննարկի առաջարկվող փոփոխությունն ու ՄԹՊՓԽ-ի ներկայացրած կարծիքը և, խորհրդակցելով սույն Կոնվենցիայի կողմերի հետ ու ստանալով նրանց միաձայն համաձայնությունը, կարող է ընդունել այն:
4. Նախարարների կոմիտեի կողմից սույն հոդվածի 3-րդ մասին համապատասխան ընդունված ցանկացած փոփոխության տեքստը պետք է ներկայացվի կողմերի ընդունմանը:
5. Սույն հոդվածի 3-րդ մասին համապատասխան ընդունված ցանկացած փոփոխություն ուժի մեջ է մտնում այն օրից հետո մեկամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը, այն ամսաթվից հետո, երբ բոլոր կողմերը Գլխավոր քարտուղարին տեղեկացրել են փոփոխությունն ընդունելու մասին:

## **Գլուխ X Եզրափակիչ դրույթներ**

### *Հոդված 42*

#### *Ստորագրումը և ուժի մեջ մտնելը*

1. Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման համար Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների կողմից, այն պետությունների կողմից, որոնք, չլինելով Եվրոպայի Խորհրդի անդամ, մասնակցել են դրա մշակմանը, և Եվրոպական Համայնքի կողմից:
2. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Վավերագրերը, ընդունելու կամ հաստատելու մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին:
3. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այն օրից հետո եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը, երբ 10 մասնակից, այդ թվում Եվրոպայի Խորհրդի առնվազն 8 անդամ պետություն, նախորդ մասի դրույթներին համապատասխան իրենց ստորագրությամբ արտահայտել են համաձայնություն Կոնվենցիայի պարտադիր լինելու վերաբերյալ:
4. 1-ն մասում նշված այն պետությունների կամ Եվրոպական Ընկերակցության համար, որոնք հետագայում են արտահայտել իրենց համաձայնությունը Կոնվենցիայի պարտադիր լինելու վերաբերյալ, այն ուժի մեջ է մտնում այն օրից հետո եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը, երբ ավանդապահին են հանձնվել վավերագրերը, ընդունելու կամ հաստատելու մասին փաստաթղթերը:

### *Հոդված 43*

#### *Կոնվենցիային միանալը*

1. Սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեն Կոնվենցիայի կողմերի հետ խորհրդակցելուց և նրանց միաձայն համաձայնությունը ստանալուց հետո կարող է Եվրոպայի Խորհրդի անդամ չհանդիսացող ցանկացած պետությանը, որը չի մասնակցել Կոնվենցիայի մշակմանը, առաջարկել միանալ դրան՝ Եվրոպայի Խորհրդի Կանոնադրության 20 d հոդվածում սահմանված ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ և Նախարարների կոմիտեում ներկայացված Պայմանավորվող պետությունների ներկայացուցիչների միաձայն քվեարկությամբ:

2. Միացող պետության համար Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այն օրից հետո եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը, երբ Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ի պահ է հանձնվել միանալու մասին փաստաթուղթը:

#### *Հոդված 44*

##### *Տարածքային կիրառելիություն*

1. Ցանկացած պետություն կամ Եվրոպական Ընկերակցությունը Կոնվենցիան ստորագրելու կամ վավերագրերը, ընդունելու, հաստատելու կամ միանալու մասին փաստաթղթերն ավանդապահին հանձնելու ժամանակ կարող են նշել այն տարածքը կամ տարածքները, որտեղ պետք է գործի սույն Կոնվենցիան:

2. Ցանկացած պետություն դրանից հետո ցանկացած ժամանակամիջոցում, կարող է Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարության միջոցով սույն Կոնվենցիայի գործողությունը տարածել հայտարարությունում նշված որևէ այլ տարածքի վրա, որի անունից հանդես գալու կամ միջազգային հարաբերություններ իրականացնելու իրավունք ունի: Այդ տարածքի համար սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այն օրից հետո եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը, երբ Գլխավոր քարտուղարը ստացել է հայտարարությունը:

3. Որևէ տարածքի վերաբերյալ նախորդ երկու մասերում ամրագրված դրույթներին համապատասխան արված հայտարարությունները կարող են ետ վերցվել Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ծանուցելու միջոցով: Հայտարարությունը համարվում է ետ վերցված այն օրից հետո եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը, երբ Գլխավոր քարտուղարը ստացել է ծանուցումը:

#### *Հոդված 45*

##### *Վերապահումներ*

Սույն Կոնվենցիայի դրույթների վերաբերյալ որևէ վերապահում չի կարող արվել, բացառությամբ 31 հոդվածի 2-րդ մասում նախատեսված դեպքերի:

#### *Հոդված 46*

##### *Չեղյալ հայտարարելը*

1. Ցանկացած կողմ ցանկացած ժամանակ կարող է Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ծանուցելու միջոցով չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան:

2. Չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում այն օրից հետո եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը, երբ Գլխավոր քարտուղարը ստացել է ծանուցումը:

#### *Հոդված 47*

##### *Ծանուցում*

Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարը Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններին, բոլոր ստորագրող կողմերին, բոլոր մասնակից պետություններին, Եվրոպական Համայնքին, բոլոր այն պետություններին, որոնք 42 հոդվածի դրույթներին համապատասխան հրավիրվել են ստորագրելու սույն Կոնվենցիան, և բոլոր այն պետություններին, որոնք 43 հոդվածի դրույթներին համապատասխան հրավիրվել են միանալու դրան, պետք է ծանուցի.

ա) ցանկացած ստորագրման մասին,

բ) վավերագիր, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթ ի պահ հանձնելու մասին,

գ) 42 և 43 հոդվածներին համապատասխան սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվա մասին,

դ) 41 հոդվածին համապատասխան ընդունված ցանկացած փոփոխության և դրա ուժի մեջ մտնելու օրվա մասին,

ե) 46 հոդվածին համապատասխան չեղյալ հայտարարելու մասին,

զ) սույն Կոնվենցիայի վերաբերյալ ցանկացած ակտի, ծանուցման կամ հայտարարության մասին,

է) 45 հոդվածին համապատասխան արված ցանկացած վերապահման մասին:

Ի հաստատումն որի, ներքոստորագրյալ ներկայացուցիչները, պատշաճորեն լիազորված լինելով, ստորագրել են սույն Կոնվենցիան:

Կատարված է Վարշավայում, 2005 թվականի մայիսի 16-ին, մեկ օրինակով՝ անգլերեն և ֆրանսերեն լեզուներով, ընդ որում երկու տեքստերը հավասարապես վավերական են և ի պահ են հանձնվում Եվրոպայի Խորհրդի արխիվ: Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարը պետք է սույն Կոնվենցիայի հաստատված պատճեններն ուղարկի Եվրոպայի Խորհրդի յուրաքանչյուր անդամ պետությանը, Եվրոպայի Խորհրդի անդամ չհանդիսացող պետություններին, որոնք մասնակցել են սույն Կոնվենցիայի մշակմանը, Եվրոպական համայնքին և սույն Կոնվենցիային միանալու հրավիրված ցանկացած պետությանը: